# ՄԱՅՐ ԱԹՈՌ

Ս. Թ. նոյեմբերի 20-ին Ամ. Հայոց Հայրապետության Ազգընտիր Տեղակալ Տ. Գէորգ արքեպիսկոպոսը ծայրագույն վարդապետի կոչում շնորհեց տ. Վահան վարդապետ Կոստանյանին, տ. Մատթեոս վարդապետ Անեմյանին և տ. Սուրեն վարդապետ Թորոսյանին:

Նրանց արտոնվեց ծաղկյա փիլոն կրել:

---

Ամենայն Հայոց Հայրապետության Ազգընտիր Տեղակալ Տ. Գէորգ արքեպիսկոպոսը Իրան-Հնդկաստանի թեմի առաջնորդ է նշանակել Տ. Վահան Ծ. վարդապետ Կոստանյանին, որը մոտիկ օրերում կմեկնի իր պաշտոնատեղին:

---

1944 թ. դեկտեմբերի 31-ին քահանայական ձեռնադրություն ստացան Վարդան Մամիկոնյանը և Խաչատուր Արուտխանյանը:

Նույն օրը Վազգեն Ավագյանն ստացավ սարկավագության աստիճան: Նա սպասարկելու է Օշականի եկեղեցում:

Դպրի աստիճան տրվեց Նորայր Սարգսյանին, որն սպասարկելու է Երևան քաղաքի Ս. Հովհաննես եկեղեցում: